

ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՄ

Երջանկահիշատակ Տ. Շնորհք Պատրիարք Գալուստյանի՝ սույն թվականի մարտի 7-ի մեզ հայտնի ցավալի մահով թափուր էր մնացել Կ. Պոլսի Պատրիարքական Աթոռը: Այդ կորուստը ցնցեց ոչ միայն Թուրքիայի հավատացյալ հայությանը, այլև ողջ հայ ժողովրդին, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի: Շուրջ ութ ամիս թափուր մնացած Կ. Պոլսի Պատրիարքական Աթոռը վերջապես գտավ իր արժանավոր գահակալին՝ հանձին գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանի:

Հոկտեմբերի 13-ին, շաբաթ օրը, ժամը 16-ին, արդեն լեփ-լեցուն էր Գումգաբուի հայոց Մայր եկեղեցին: Գահակալության հանդիսություններին մասնակցելու համար հրավիրված էին. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կողմից՝ Ֆրանսիայի հայոց հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նագգաշյանը, Հորդանանի հայոց Եկեղեցու՝ Ամմանի տեսուչ գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Թոփալյանը, Հայ Կաթողիկե համայնքի վիճակավոր Տ. Հովհաննես արքեպիսկոպոս Զոլաքյանը՝ իր շքախմբով, Մխիթարյան միաբանության անդամ հայր Արիս վարդապետ Պոհջալյանը:

Հրավիրյալների թվում էին նաև Հույն Ուղղափառ Եկեղեցու, Լատին Կաթոլիկ Եկեղեցու, Ալեքսանդրիայի Ղպտի Ուղղափառ Եկեղեցու, Սիրիայի Եկեղեցու, Իտալական Եկեղեցու, Ֆրանսիական Եկեղեցու, Գերմանական Եկեղեցու, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների, Խորհրդային Միության, Հոլանդիայի, Գերմանիայի և Լեհաստանի դեսպանատների, Ֆինլանդիայի, Կանադայի, Բելգիայի, Ֆրանսիայի և Իսպանիայի հյուպատոսությունների ներկայացուցիչներ և բազմաթիվ այլ անձինք:

Գահակալության հանդիսությանը ներկա էր նաև Ստամբուլի փոխկուսակալը:

Եկեղեցու ձախակողմյան դասը զբաղեցրել էին հյուր օտար հոգևորականները, իսկ աջակողմյանը՝ հայ հոգևորականությունը և սարկավագաց դասը:

«Լուր ձայնից մերոց» աղոթքի ընթերցումից հետո, եպիսկոպոսները, շուրջառ և եմիփորոն հագած, բարձրանում են խորան՝ շրջապատելով նորընտիր Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Հորը: Դպիրների «Ուրախ լեր» շարականի երգեցողությունից հետո, պատրիարքական փոխանորդ գերաշնորհ Տ. Շահան եպիսկոպոս Սվաճյանը արտասանում է Պատրիարք Սրբազան Հորն ուղղված իր խոսքը, որտեղ ասում է.

«Այսօր մեր՝ Թուրքիոյ հայոց Պատրիարքական Աթոռը իր պատմական օրերեն մեկը կապրի:

Սուգի ու տրտմության քողը, որ ութ ամիսներ առաջ իջած էր այս գահուն վրա, հանկարծակիորեն զրկելով այս ժողովուրդը իր սիրեցյալ Պատրիարքեն, բարի և առաքինի իր քաջ հովվապետեն, այսօր դարձյալ կամոքն Աստուծո, իրերու և դեպքերու միացումով իր վրայեն կնետե տրտմության թախիծը, և Ձեր ընտրությամբ կհագնի դարձյալ ուրախության պատմուճանը և կփայլի լուսաշող շքեղությամբ:

Պատրիարքական այս Աթոռը ավելի քան հինգ դարեր ճակատագրական դեր կատարած է մեր ժողովուրդին կյանքին մեջ: Ձեզմե առաջ այս Աթոռին վրա բազմած են բազմաթիվ պատրիարքներ, որոնք սպառազինված բարոյական և հոգևոր ուժերով, իրենց խաղաղ գործունեությամբ, հավատքի և մըտավոր բարձր արժանիքներով ու հովվապետական հարուստ ու բարենախանձ բարեմասնություններով, արդարացուցած են մեր ժողովուրդին բարի ակնկալությունները:

Այսօր կարգը Ձերն է: Վստահ եմ, թե Ձեր քառասուն տարիներու քահանայական սպասարկության մեջ հավատարիմ մնացիք Ձեր ուխտին...»:

Այնուհետև Թուրքիայի հայոց նորընտիր Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանը, ձեռամբ պատրիարքական փոխանորդ գերաշնորհ Տ. Շահան եպիսկոպոս Սվաճյանի, ստանում է պատրիարքական ասա և, ծնրադիր, իր ուխտը կատարելուց հետո, բարձրանում Պատրիարքական գահ, որպես այդ պատմական Աթոռի 83-րդ գահակալ:

Ապա Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Հորն ուղղված շնորհավորանքի ու բարեմաղթության խոսք են արտասանում Հայ և քույր Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչները:

Շնորհավորանքներից և բարեմաղթություններից հետո, եկեղեցու Սուրբ Սեղանից պատրիարքական իր ընդարձակ ու բովանդակալից խոսքն է ասում Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Հայրը, որտեղ ի մասնավորի նշում է.

«Եթե կուզենք, որ իրապես արդյունավորվի Թրքահայոց Պատրիարքության նկատմամբ մեր սերը, նախ պետք է զիրար սիրենք. եղբայրության զգացումը պարապ խոսք մը չէ, այլ գաղափար մը և իրողություն մը: Պատրիարքարանը ազգին նվիրական տունն է, սակայն գործի կամ շահու հաղորդակցությամբ հավաքված անդամներու ընկերակցություն չենք, այլ նվիրումով մեջտեղ եկած եղբայրություն մը, իրագործելու համար հավատքի և սիրո կյանքը:

Այս տան նպատակն է Աստուծո փառքը և համայնքին սերը վառ պահել: Միացնենք մեր ջանքերը որպեսզի ժամանակին մեջ ուր կապրինք, մեր միջոցավ ևս իրագործվի «Ուխտն զոր երդուաւ Աստուած հարցն մերոց» պահելու համար մեր համայնքին կյանքը խաղաղության և արդարության մեջ...»:

Այնուհետև սարկավագաց դասը երգում է «Աղբյուր կենաց» շարականը, որից հետո Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Հայրը իջնում է խորա-

ցից և մոտենալով բազմում Պատրիարքական գահին:

«Տերունական աղօթք»-ից հետո Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Հայրը, Պատրիարքական Աթոռից դառնալով դեպի ժողովրդի բազմությունը, «Պահպանիչ» է արտասանում:

Այնուհետև նորընտիր Սրբազան Պատրիարք Հայրը մեծ թափորով առաջնորդվում է Պատրիարքարան, որտեղ կազմակերպվում է ճոխ ընդունելություն:

Հոկտեմբերի 14-ին, կիրակի օրը, Ամենապատիվ Պատրիարք Սրբազան Հայրը իր անդրանիկ ս. պատարագը մատուցեց Աթոռանիստ Մայր եկեղեցում՝ հայ և օտար հոգևորականության և բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ:

Ժամը 10.30-ին եկեղեցական թափորը, համայնքայիններին կողմից բռնած ամպհովանու ներքո, Ամենապատիվ Պատրիարք Սրբազան Հորն առաջնորդում է Մայր տաճար: Թափորին մաս էին կազմում Տ. Շահան և Տ. Գյուտ սրբազանները, սարկավագների դասը և օտար հոգևորականներ: Պատրիարք Սրբազան Հոր երկու կողմերում էին Տ. Մեսրոպ և Տ. Վահան սրբազանները: Ս. Սեղանին, իբրև բուրվառակիրներ, սպասարկում են Տ. Մանվել և Տ. Արամ հայր սուրբերը, քահանա հայրեր և սարկավագներ:

Օրվա ս. պատարագի մեջ կանոնական բացառիկ փոփոխություն է կատարվում. հիշատակության բաժնից առաջ զգեստավորվում են բոլոր եպիսկոպոսները, ինչպես նաև Ասորի և Ղպտի Եկեղեցիների ներկայացուցիչ սրբազանները, և միասնաբար կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ նախկին բոլոր պատրիարքներ՝ Հովակիմ Պատրիարքից մինչև Շնորհք Պատրիարք:

«Հայր մեր»-ից առաջ Պատրիարք Սրբազան Հայրը հավատքի և սիրո մասին բովանդակալից քարոզ է խոսում, որտեղ ի մասնավորի ասում է.

«Հիսուսի խաչը Գողգոթայի վրա պատմական իրողություն մըն է, ինչպես իրողություն մըն է Հուլիոս Կեսարի սպանությունը Հռովմի մեջ: Բայց Կեսարի սպանությունը ոչ մեկ կարևորություն կներկայացնե մեզի, քանի որ մենք այդ պատմական դեպքին մեջ չենք հանդիպիր Աստուծո: Սակայն Գողգոթայի վրա Աստված կհանդիպի մեզի՝ տալով իր սերը. «Աստված կխաչվի մարդը փրկելու համար»՝ ինքնին արդեն աննախընթաց կարևորություն մը կստանա: Աստված որ դարերով խորհուրդ մըն էր, իր մեջ քողը մեկ կողմ կընե և իր սերը կբանա մարդոց, կբարեփոխե մարդկային կյանքը ամբողջությամբ:

Քրիստոսով, ամբողջությամբ փոխվեցավ մարդոց՝ Աստուծո նկատմամբ ունեցած ըմբռնումը, որքան խոր՝ նույնքան արտառուչ: Քրիստոնյան իր Արարչին մեջ զգաց տիեզերական խորհուրդին էությունը, մարդկային կյանքին պատճառն ու գոյությունը, ամենասիրուն ներդաշնակության նախախնամողը և մարդոց ազնվացման և մեծացման հարացույցը...»:

Այնուհետև Ամենապատիվ Պատրիարք Սրբազան Հայրը սուրբ հաղորդություն տվեց ներկաներին և դարձյալ վեհաշուք թափորով առաջնորդվեց Ազգային Պատրիարքարան՝ եկեղեցու քաղցրալուր դողանջների ներքո:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ